

Արմավիրի մարզի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հաստատում եմ

Տնօրեն՝



Զ.Ստեփանյան

Թեմատիկ պլանավորում

2023-2024 ուստարի

Տարեկան

Առարկան Բնագրություն

Դասարան V

Ժամաքանակ 68

Ուսուցիչ Լարիսա Գրիգորյան

Պահպանված է ուսպլանով նախատեսված ժամաքանակը

Փոխտնօրեն՝  Ա.Հարությունյան

Համապատասխանում է պետական չափորոշչին և ծրագրին

Մ/մ նախագահ  Ա.Գրիգորյան

Բնություն
Տարեկան թեմատիկ պլան
V դասարան
Շաբաթական 2 ժամ
(34 շաբաթ՝ 68 ժամ)

N	Դասի թեման	Դասի վերջնարդյունքները	Ուսումնական նյութ
Թեմա 1. ԲՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ 6 Ժ.			
ԴԱՍ 1.	Բնություն, բնական երևույթներ	Ներկայացնել ինչ է բնությունը, ի՞նչ է բնության երևույթը: Թվարկել մարդու համար վտանգավոր երևույթներ:	§1 (էջ 5-8)
ԴԱՍ 2.	Բնության ուսումնասիրման մեթոդներ, դիտում, փորձ, չափում	Նկարագրել բնության ուսումնասիրության հիմնական մեթոդները: Կատարել պարզ դիտումներ (օրինակ՝ բույսի աճը, ջրի եռման պրոցեսը, ձյան փաթիլի կառուցվածքը): Բացատրել գիտափորձի և դիտման տարբերությունը:	
ԴԱՍ 3.	Բնության ուսումնասիրության գործիքներ և սարքեր	Բերել երկարություն, ժամանակ, զանգված, ջերմաստիճան չափող սարքերի օրինակներ: Որոշել չափիչ սարքի բաժանման արժեքը: Կատարել չափման միավորների ձևափոխություններ: Չափել և համեմատել մարմինները բնութագրող ֆիզիկական մեծությունները: Չափաքանոնի, վայրկենաչափի, չափազևանի օգնությամբ կատարել չափումներ:	
ԴԱՍ 4.	Գործնական աշխատանք 1. Չորսուի ծավալի և դասագրքի մեկ թերթի հաստության որոշումը	Կարողանալ կատարել համապատասխան չափումներ և հաշվարկներ՝ չորսուի ծավալը և դասագրքի մեկ թերթի հաստությունը որոշելու համար	
ԴԱՍ 5.	Գործնական աշխատանք 2. Հեղուկի ծավալի չափումը	Կարողանալ չափազևանի օգնությամբ չափել հեղուկի ծավալը:	
ԴԱՍ 6.	Թեմայի ամփոփում		
Թեմա 2. ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ 9Ժ.			
ԴԱՍ 7.	Մարմնի զանգված	Տարբերակել նյութ և մարմին հասկացությունները:	

		Բացատրել մարմնի զանգված հասկացությունը, այն արտահայտել տարբեր միավորներով՝ մգ, գ, կգ, տ: Համեմատել տարբեր նյութերից պատրաստված նույն ծավալի մարմինների զանգվածները:	
ԴԱՍ 8.	Մաքուր նյութեր և խառնուրդներ	Տարբերել մաքուր նյութերը խառնուրդներից: Թվարկել կենցաղում և շրջապատում հանդիպող մաքուր նյութեր և խառնուրդներ:	
ԴԱՍ 9.	Խառնուրդների բաժանման եղանակները	Ներկայացնել խառնուրդների բաժանման եղանակներ՝ պարզեցում, զտում կամ ֆիլտրում, շոգիացում, բաժանում մագնիսի օգնությամբ:	
ԴԱՍ 10.	Գործնական աշխատանք 3. Գոլորշիացման եղանակով աղաջրից կերակրի աղի անջատում	Կարողանալ գոլորշիացման եղանակով աղաջրից կերակրի աղը անջատել:	
ԴԱՍ 11.	Լուծույթներ	Ներկայացնել, թե ի՞նչ է լուծույթը: Բերել ծանոթ լուծույթների մի քանի օրինակներ: Թվարկել ջրում լավ լուծվող մի քանի նյութերի օրինակներ:	
ԴԱՍ 12.	Գործնական աշխատանք 4. Կերակրի աղի և շաքարավազի նոսր և հազեցած լուծույթներ	Կարողանալ պատրաստել կերակրի աղի և շաքարավազի նոսր և հազեցած լուծույթներ:	

	լուծույթների պատրաստում		
ԴԱՍ 13.	Գործնական աշխատանք 5. Կերակրի աղի, ավազի և երկաթի խարտուքի խառնուրդի բաղադրիչների բաժանում	Կարողանալ իրականացնել կերակրի աղի, ավազի և երկաթի խարտուքի խառնուրդի բաղադրիչների բաժանում:	
ԴԱՍ 14.	Լուծույթների նշանակությունը բնության մեջ և մարդու կյանքում	Թվարկել կենցաղում և այլ ոլորտներում կիրառվող լուծույթների օրինակներ: Ճանաչել վտանգավոր նյութերի մակնշումը (հրավտանգ, թունավոր և այլն), դրանց հետ անվտանգ վարվելու կանոնները:	
ԴԱՍ 15.	Թեմատիկ ամփոփիչ աշխատանք	Կատարել թեմատիկ ամփոփիչ աշխատանքը:	
Թեմա 3. ՆՅՈՒԹԻ ՄԱՍՆԻԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ			
ԴԱՍ 16.	Ատոմներ, մոլեկուլներ	Բացատրել, որ նյութը կազմված է փոքրագույն մասնիկներից՝ ատոմներից և մոլեկուլներից:	
ԴԱՍ 17.	Նյութի պինդ, հեղուկ և գազային վիճակները	Նկարագրել նյութի կառուցվածքը պինդ, հեղուկ և գազային վիճակներում: Իմանալ, որ ջերմաստիճանից կախված նյութը կարող է գտնվել երեք վիճակներում: Բնութագրել ջրի երեք վիճակները:	
ԴԱՍ 18.	Մոլեկուլների շարժման առանձնահատկությունները նյութի պինդ, հեղուկ և գազային վիճակներում	Ներկայացնել մոլեկուլների շարժման առանձնահատկությունները նյութի պինդ, հեղուկ և գազային վիճակներում:	

ԴԱՍ 19.	Քիմիական տարրեր և նշաններ	Իմանալ՝ ինչ է քիմիական տարր, տարրերել որոշ առավել հայտնի տարրերի քիմիական նշանները (ջրածին, հելիում, ածխածին, ազոտ, թթվածին, երկաթ):	
ԴԱՍ 20.	Պարզ և բարդ նյութեր	Տարբերակել պարզ և բարդ նյութերը որոշ օրինակների հիման վրա (ջրածին, թթվածին, օզոն, ազոտ, ջուր, ածխաթթու գազ):	
ԴԱՍ 21	Թեմայի ամփոփում		
Թեմա 4. ՆՅՈՒԹԻ ՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
ԴԱՍ 22.	Հալում և պնդացում	Բնության մեջ և կենցաղում հանդիպող օրինակներով ներկայացնել հալման և պնդացման երևույթները:	
ԴԱՍ 23.	Գոլորշիացում և խտացում	Բնության մեջ և կենցաղում հանդիպող օրինակներով ներկայացնել գոլորշիացման և խտացման երևույթները: Բացատրել, թե ինչ գործոններից է կախված գոլորշիացման արագությունը:	
ԴԱՍ 24.	Գործնական աշխատանք 6. Ջրի գոլորշիացման և խտացման երևույթների ուսումնասիրություն	Կարողանալ փորձով ստուգել, որ գոլորշիացման արագությունը կախված է հեղուկի ազատ մակերևույթի մակերեսից: Փորձով ցուցադրել հեղուկի խտացման երևույթը:	
ԴԱՍ 25.	Եռում	Դիտել և նկարագրել եռման պրոցեսը: Ներկայացնել եռման ջերմաստիճան հասկացությունը:	
ԴԱՍ 26.	Գործնական աշխատանք 4. Ջրի և	Չափել հեղուկի եռման ջերմաստիճանը:	

	աղաքի եռման ջերմաստիճանների չափումն ու համեմատումը:		
ԴԱՍ 27.	Թեմայի ամփոփում		
Թեմա 5. ՇԱՐԺՈՒՄ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ			
ԴԱՍ 28.	Շարժում: Արագություն	Բերել բնության մեջ, կենցաղում և տեխնիկայում հանդիպող շարժման օրինակներ: Ներկայացնել՝ ինչ բանաձևով է որոշվում մարմնի արագությունը, ինչ միավորներով է այն արտահայտվում: Համեմատել իրեն ծանոթ կենդանի և անկենդան մարմինների շարժման արագությունները:	
ԴԱՍ 29.	Խնդիրների լուծում	Հաշվել մարմնի արագությունը անցած ճանապարհի և ժամանակի տրված արժեքներով:	
ԴԱՍ 30.	Գործնական աշխատանք 7. Մարմնի շարժման արագության որոշումը համապատասխան չափումների օգնությամբ	Որոշել մարմնի արագությունը՝ կատարելով համապատասխան չափումներ:	
ԴԱՍ 31.	Մարմինների փոխազդեցություն: Ուժ	Թվարկել մարմինների փոխազդեցության օրինակներ: Ներկայացնել՝ ինչ է ուժը:	
ԴԱՍ 32.	Առաձգականության ուժ	Ներկայացնել՝ ինչ է առաձգականության ուժը, բերել օրինակներ:	

		Ներկայացնել առաձգականության ուժի դրսևորումները բնության մեջ և առօրյա կյանքում:	
ԴԱՍ 33.	Ծանրության ուժ	Ներկայացնել՝ ինչ է ծանրության ուժը, ինչ է մարմնի կշիռը, բերել օրինակներ: Ներկայացնել ծանրության ուժերի դրսևորումները բնության մեջ և առօրյա կյանքում:	
ԴԱՍ 34.	Գործնական աշխատանք 8. Ծանրության ուժի չափումը ուժաչափով	Կարողանալ ուժաչափով չափել ծանրության ուժը:	
ԴԱՍ 35.	Շփման ուժեր	Ներկայացնել շփման ուժը: Ներկայացնել շփման ուժերի դրսևորումները բնության մեջ և առօրյա կյանքում:	
ԴԱՍ 36.	Գործնական աշխատանք 9. Դադարի շփման ուժերի չափումը ուժաչափով	Կարողանալ ուժաչափով չափել դադարի շփման ուժը:	
ԴԱՍ 37.	Շփման ուժի դերը մարդու և տարբեր կենդանիների շարժման գործընթացում	Ներկայացնել շփման ուժի դերի տարբեր կենդանիների շարժման գործընթացում:	
ԴԱՍ 38.	Թեմատիկ գրավոր աշխատանք	Կատարել թեմատիկ գրավոր աշխատանքը	
Թեմա 6. ԷՆԵՐԳԻԱ			
ԴԱՍ 39.	Էներգիա: Էներգիայի տեսակները և փոխակերպումները	Ներկայացնել՝ ինչ է էներգիան: Բերել էներգիայի տարբեր տեսակների, դրանց փոխակերպվելու օրինակներ:	

ԴԱՍ 40.	Էներգիայի աղբյուրներ	Ներկայացնել էներգիայի տարբեր աղբյուրներ: Տարբերել էներգիայի վերականգնվող և չվերականգնվող աղբյուրները, բերել օրինակներ:	
ԴԱՍ 41.	Էներգախնայողություն	Ներկայացնել, թե ինչ է էներգախնայողությունը: Հիմնավորել, թե ինչու է պետք խնայել էներգիան:	
ԴԱՍ 42.	Այրում	Ներկայացնել՝ ինչ է այրումը: Նկարագրել այրման հետևանքով մթնոլորտի աղտոտման հետևանքները:	
ԴԱՍ 43.	Գործնական աշխատանք 10. Նույն զանգվածով տարբեր վառելանյութերի այրումից առաջացած ջերմությունները	Փորձի միջոցով համեմատել նույն զանգվածով տարբեր վառելանյութերի այրումից առաջացած ջերմությունները:	
ԴԱՍ 44.	Թեմայի ամփոփում		
Թեմա 7. ՁԱՅՆ ԵՎ ԼՈՒՅՍ			
ԴԱՍ 45.	Ձայնի աղբյուրներ: Ձայնի տարածումը	Ներկայացնել՝ ինչ է ձայնը, թվարկել ձայնի աղբյուրները:	
ԴԱՍ 46.	Ձայնի արձակումն ու ընկալումը մարդու և կենդանիների կողմից: Ականջ	Բացատրել ձայնի առաջացման և ընկալման երևույթը:	
ԴԱՍ 47.	Գործնական աշխատանք 11. Ձայնի տարբեր աղբյուրների ուսումնասիրություն	Կարողանալ ուսումնասիրել ձայնի տարբեր աղբյուրները, նրանցում ձայնի առաջացման մեխանիզմը:	
ԴԱՍ 48.	Լույս: Լույսի աղբյուրներ	Բերել լույսի բնական և արհեստական աղբյուրների օրինակներ:	

		Բացատրել ստվերի առաջացման երևույթը:	
ԴԱՍ 49.	Լույսի անդրադարձումն ու բեկումը	Օրինակներով լուսաբանել լույսի անդրադարձման, բեկման, տեսողության երևույթները:	
ԴԱՍ 50.	Գործնական աշխատանք 12. Արեգակի եվ լուսնի խավարումների մոդելի կառուցում	Մոդելավորել Արեգակի և Լուսնի խավարումները:	
ԴԱՍ 51.	Աչք և տեսողություն	Ներկայացնել աչքի կառուցվածքը և տեսողության երևույթը:	
ԴԱՍ 52.	Մարմինների գույնը	Բացատրել մարմինների գույնը՝ ելնելով սպիտակ լույսի բարդ կառուցվածքից:	
ԴԱՍ 53.	§ 47. Գործնական աշխատանք 13. Սպիտակ լույսի տարրալուծումը տարբեր գույնի լույսերի	Փորձով հիմնավորել, որ սպիտակ լույսը կարելի է տարալուծել տարբեր գույնի լույսերի:	
ԴԱՍ 54	Թեմատիկ գրավոր աշխատանք	Կատարել թեմատիկ գրավոր աշխատանքը:	
Թեմա 8. ԲՈՒՅՍԵՐ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ			
ԴԱՍ 55.	Բույսերի մասերը	Ներկայացնել բույսի կառուցվածքը, նրա տարբեր մասերը:	
ԴԱՍ 56.	Սերմեր և պտուղներ: Սերմի կառուցվածքը	Թվարկել սերմի հիմնական մասերը, ներկայացնել՝ ի՞նչ դեր է կատարում այդ մասերից յուրաքանչյուրը:	
ԴԱՍ 57.	Գործնական աշխատանք 14. Սերմի կառուցվածքի ուսումնասիրություն	Փորձով ուսումնասիրել լոբու սերմի կառուցվածքը:	

ԴԱՍ 58.	Սերմի աճման պայմանները: Ծլարձակում	Ներկայացնել սերմի աճման պայմանները: Նկարագրել ծլարձակման երևույթը:	
ԴԱՍ 59.	Գործնական աշխատանք 15. Սերմի ծլարձակման համար անհրաժեշտ պայմանների ուսումնասիրություն	Իրականացնել փորձեր, որոնք թույլ կտան պարզել սերմերի ծլման վրա լույսի, ջերմության, ջրի և օդի ազդեցությունը:	
ԴԱՍ 60.	Բույսի աճի համար անհրաժեշտ պայմանները	Հիմնավորել, որ բույսի աճի համար անհրաժեշտ գործոններն են հողը, ջուրը, լույսը, օդը և ջերմությունը:	
ԴԱՍ 61.	Գործնական աշխատանք 16. Բույսի աճի վրա տարբեր գործոնների ազդեցության ուսումնասիրություն	Իրականացնել փորձեր, որոնք թույլ կտան պարզել բույսի աճման վրա լույսի, ջերմության, ջրի և օդի ազդեցությունը:	
ԴԱՍ 62.	Բույսի ծաղիկների նշանակությունը	Ներկայացնել, թե ի՞նչով են իրարից տարբերվում տարբեր բույսերի ծաղիկները: Ո՞րն է ծաղիկների դերը բույսի կյանքում:	
ԴԱՍ 63.	Ծաղկի մասերը	Թվարկել, թե ի՞նչ մասերից է կազմված ծաղիկը, սխեմատիկորեն պատկերել ծաղկի կառուցվածքը:	
ԴԱՍ 64.	Գործնական աշխատանք 17. Ծաղկի կառուցվածքի ուսումնասիրություն	Փորձով ուսումնասիրել ծաղկի կառուցվածքը:	
ԴԱՍ 65.	Փոշոտում	Նկարագրել փոշոտումը, նրա դերը և իրականացման եղանակները:	

ԴԱՍ 66.	Սերմերի տարածումը	Նկարագրել սերմերի տարածման եղանակները:	
ԴԱՍ 67.	Բույսի կենսացիկլը	Բացատրել՝ ի՞նչ է բույսի կենսացիկլը: Թվարկել նրա չորս հիմնական փուլերը	
ԴԱՍ 68.	Թեմատիկ գրավոր աշխատանք	Կատարել թեմատիկ գրավոր աշխատանքը:	